

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-247-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրված «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում`

1) 16-րդ հոդվածի 2-րդ մասից հանել <<, ինչպես նաև որակավորման վկայականի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու հիմքերը>> բառերը:

2) 16-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով`

<<1) Քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության որակավորման վկայականի (այսուհետ՝ վկայական) գործողության կասեցման համար հիմք են`

ա. վկայականի գործողությունը կասեցնելու վերաբերյալ դատական ակտը.

բ. կառավարության որոշմամբ սահմանված քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության աշխատանքների իրականացմանը ներկայացվող պարտադիր պահանջները չկատարելը:

2) Վկայականի գործողությունը կասեցնելու մասին պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանը` այն կայացնելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվա ընթացքում, տրվում կամ պատշաճ ձևով ուղարկվում է որակավորում ստացած անձին: Վկայականի գործողությունը կասեցվում է մինչև դրա պատճառների վերացումը:

3) Վկայականի գործողության կասեցման ընթացքում որակավորված անձն իրավունք չունի իրականացնել քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն` բացառությամբ այն դեպքերի, երբ այն ուղղված է կասեցման պատճառները վերացնելուն:

4) Վկայականի գործողության դադարեցման համար հիմք են`

ա) վկայական ստանալու համար ներկայացված փաստաթղթերում *հետագայում հայտնաբերված* կեղծ կամ խեղաթյուրված տվյալների առկայությունը.

բ) որակավորված անձին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ձանաչելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու վերաբերյալ դատական ակտը.

գ) վկայականի գործողության դադարեցման վերաբերյալ որակավորված անձի դիմումը.

դ) վկայականի գործողության կասեցման ժամկետում գործունեություն իրականացնելը.

ե) մեկ տարվա ընթացքում երկու անգամ վկայականի գործողության կասեցումը.

զ) որակավորված անձի մահվան *փաստը հաստատող փաստաթուղթը*:

5) Վկայականի գործողության դադարեցման մասին պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանը` այն կայացնելու օրվան հաջորդող 1 աշխատանքային օրվա ընթացքում (բացառությամբ սույն կետի գ) ենթակետի), տրվում կամ պատշաճ ձևով ուղարկվում է որակավորում ստացած անձին:

6) Վկայականի գործողության կասեցումը և դադարեցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության տարածքում քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեության բնագավառում հայտատուի մասնագիտական որակավորման մշտական գործող հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով: Վկայականի գործողության կասեցման և դադարեցման հրամանի բողոքարկման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7) Վկայականի գործողության դադարեցումից հետո նոր վկայական ստանալու համար անձը կարող է դիմել դրա գործողության դադարեցման օրվանից վեց ամիս հետո: >>:

3) 72-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 4-րդ կետով.

«4) խրախուսման ֆոնդ:».

4) 72-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Անշարժ գույքի պետական ռեգիստրի համակարգի աշխատակիցների խրախուսման ֆոնդի չափը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի տարեկան ֆոնդը: >>:

5) 73-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի «14-րդ և 21-րդ» բառերը փոխարինել «16-րդ և 18-րդ» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել <<, ինչպես նաև որակավորման վկայականի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու հիմքերը.>> բառերը:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

<<ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ԱՐԿԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը	Նախագծի հոդված	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
<p>1. ՀՀ Աժ պատգամավորներ Ա.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Լ.Ալավերդյան</p>	<p>&lt;&lt;Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին&gt;&gt; ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին&gt;&gt; ՀՀ օրենքում փոփոխություն ներ և լրացումներ կատարելու մասին&gt;&gt; ՀՀ օրենքի նախագծի Հոդված 1-ին 2-րդ կետ, 4-րդ կետ, 7-րդ կետ</p>	<p>- Առաջարկվել է որակավորման վկայականի գործողության կասեցման վերաբերյալ հրամանը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն ընձեռել:</p> <p>- Առաջարկվել է 4-րդ կետում ներկայացված վկայականի գործողության դադարեցման հիմքերի ա) ենթակետը խմբագրել:</p>	<p>Ընդունվել է: Ավելին, ոչ միայն վկայականի գործողության կասեցման, այլև դադարեցման դեպքում բողոքարկելու հնարավորություն ընձեռնելու նպատակով խմբագրվել է նախագծի 1-ին հոդվածի 2)-րդ կետի 6-րդ ենթակետը՝ նախատեսելով վկայականի գործողության կասեցման, դադարեցման հրամանի բողոքարկման կարգը սահմանել ՀՀ կառավարության կողմից:</p> <p>Ընդունվել և խմբագրվել է:</p>
<p>2. ՀՀ Աժ պատգամավոր Ա.Մինասյան</p>	<p>Հոդված 1-ին 3) կետ</p>	<p>- &lt;&lt;Բյուջետային համակարգի մասին&gt;&gt; Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում է, որ այս ֆոնդերի ստեղծման կարգը սահմանվում է օրենքով, սակայն Ձեր կողմից ներկայացված փոփոխությունը չի նախատեսում ձևավորման կարգ, միայն նշվում է, որ այդպիսի ֆոնդ պետք է լինի: Հետևաբար, ինչպես պետք է կատարվեն այդ հատկացումները և արդյոք առաջնահերթ է համարվում խրախուսման ֆոնդի ձևավորումը, նոր մյուսներինը:</p>	<p>Խրախուսման ֆոնդի ձևավորումը նախատեսված է նախագծում, որի համաձայն համակարգի աշխատողների խրախուսման ֆոնդի չափը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի տարեկան ֆոնդը: Միաժամանակ &lt;&lt;Բյուջետային համակարգի մասին&gt;&gt; Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվում է, որ խրախուսման միջոցներն օգտագործվում են անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի ղեկավարի սահմանած կարգով:</p> <p>Խրախուսման և պահուստային ֆոնդերի ձևավորման մասով հերթականության կամ առաջնահերթության չափանիշներ չեն կարող գործել, քանի որ դրանք ձևավորվում են կադաստրի համակարգի</p>

			<p>ընդհանուր բյուջեի շրջանակներում: Պահուստային ֆոնդը նախատեսել է սեփականատերերին կամ օգտագործողներին պատճառված վնասի փոխհատուցման համար, ի դեպ յուրաքանչյուր տարի համակարգի բյուջեում այն նախատեսվում է 5 մլն դրամի չափով:</p>
<p>3. ՀՀ ԱԺ պատգամավոր Լ.Ալավերդյան</p>	<p>Օրենքի նախագիծ</p>	<p>Նախագծով առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել 2011թ. հունիսի 23-ի ՀՀ օրենքում, որը պետք է ուժի մեջ մտնի 2012թ. հունվարի 1-ից: Այսինքն՝ առաջարկվող նախագծով հղում է կատարվում և հիշատակվում է դեռ ուժի մեջ չմտած իրավական ակտը:</p>	<p>Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է, կարգավորումները իրականացվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորման շրջանակներում:</p>